# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ՀՀ Շիրակի մարզի <<Նոր Ախուրյանի հիմնական դպրոց>>ՊՈԱԿ-ի կենսաբանություն(6 դասաժամ ) ուսուցչի տեղի համար:

ՈՒսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումը անցկացվում է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1)դիմում՝(Ձև 1),մեկ լուսանկար 3*4 չափի

2)բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ) (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),
3)անձը հաստատող փաստաթուղթ,

4)«Հանրակրթության մասին»օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

5)ինքնակենսագրություն (Ձև 5)

6)այլ պետությունների քաղաքացիները ՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7)Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում)

9)որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ.

10)Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան ՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում).

11)«Հանրակրթության մասին »օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի(առկայության դեպքում նաև՝2-րդ կետի)պահանջվող համապատասխան փաստաթուղթը.

12) «Հանրակրթության մասին »օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր՝

ժամը $10^{00}$ –ից մինչև $15^{00}$ ն, բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 17-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ Շիրակի մարզի Նոր Ախուրյանի հիմնական դպրոցում:

Հասցե՝ գ.Նոր Ախուրյան Յու. Ղամբարյան 1փակուղի:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098280576